



ՄՊԱՌՈՂ

ՍԿՍԱԾ
1997
թվականից

ՇՆՈՐՀԱՎՈՐ
ԱՄԱՆՈՐ
ԵՎ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
2021

Միրելի հայրենակիցներ

Տարեմուտին, որքան էլ հոգիներս խռովված լինի ու հույսի շողը՝ աղուր, բոլորիս միավորում է մի երազանք՝ ապրել խաղաղ երկնքի տակ, մեր երեխաներին հնարավորինս վերադարձնել այս պահին այդքան երանելի երջանիկ ու խաղաղ մանկությունը, հույսը, որ այն անցնելու է հայրենի երկրում, անհոգ ու լուսավոր, ինչպիսին սովորաբար լինում է հենց Ամանորի գիշերը:

Այսօր կարծես թե ամենադժվարն ու սարսափելին հեղուկում են, թեև խոստովանենք, որ իրականությունն էլ պակաս բարդ ու հակասական չէ: Շուրջբոլորն ավերածություններ են, անօթևան մեծեր, որոնց համար հետպատերազմյան կյանքի շարժիչ ուժը հույսն ու լավատեսությունն են, և տագնապաժ երեխաներ, որոնց ամենամեծ ու իսկական պարգևը խաղաղությունն է:

Ամեն բան, այդ թվում և՛ համաճարակներն ու պատերազմներն անցողիկ են, մնայուն ու հավերժ են հայ ժողովուրդն ու նրա սերն առ հայրենիք:

Ապավինենք ինքներս մեզ, ապավինենք ամենակարող Աստծուն:

Շնորհավոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ:

Մելիտա Հակոբյան

*Սպառողների ազգային ասոցիացիայի նախագահ,
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա
ԻԱՄ նախագահ*



ՄՊԱՌՈՂ

տեղեկատվական, վերլուծական,
խորհրդատվական պարբերական

Հիմնադիր և հրատարակիչ՝
ԱՆՆԱ Սպառողների ազգային ասոցիացիա

ՄԵԼԻՏԱ ՀԱԿՈՐՅԱՆ
Գլխավոր խմբագիր

ՍԱՄՎԵԼ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Գործադիր տնօրեն

ՆԱՐԻՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր

ԼԻԱ ՕՍԻՊՅԱՆ
Սննդամթերքի անվտանգության վերլուծության
պատասխանատու, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌՈՒԲԵՆ ՀԱՅԹՅԱՆ
Ասոցիացիայի փոխնախագահ, մարքեթինգի
և մոնիթորինգային հետազոտությունների
պատասխանատու, սննդի ապահովման
ծառայությունների սերտիֆիկացման փորձագետ, սննդի
որակի աուդիտոր

ԼԵՎՈՆ ԱՃԵՄՅԱՆ
Գյուղմթերքների որակի վերլուծության
պատասխանատու, Կենսաբանական գիտությունների
թեկնածու, Էկոլոգիայի միջազգային ակադեմիայի
անդամ

ԱՆՆԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Ասոցիացիայի արտաքին և ներքին
հարաբերությունների գծով փոխնախագահ, փորձագետ

ՀԱՍՄԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա
ԻԱՄ արտաքին և ներքին հարաբերությունների գծով
փոխնախագահ, PR մասնագետ

ՌՈԶԱԼԻԱ ԱՎԱՆԵՍՅԱՆ
Լաբորատորիաների գծով փորձագետ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԵԼԻՔՅԱՆ
Ասոցիացիայի գլխավոր փորձագետ,
Տնտեսագիտության թեկնածու

ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ
Տեղեկատվության վերլուծության պատասխանատու,
Երևանի Ագրարային համալսարանի դոցենտ

ԺԵՆՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների որակի
վերլուծության պատասխանատու,
Կենսաբանական գիտությունների թեկնածու

ԱՐԴԱ ԻՍԿՈՅԱՆ
Իրավախորհրդատու, ԵՊՀ Իրավաբանական
ֆակուլտետի Զաղաքացիական իրավունքի ամբիոնի
վարիչ, պրոֆեսոր

ԱՐԱՎԻԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ,
Լրագրող

ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ
Դիզայներ

ԱՐԵՎԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ
Լուսանկարիչ

ՄՊԱՌՈՂ

տեղեկատվական, վերլուծական,
խորհրդատվական պարբերականի
խմբագրական խորհուրդ

ՀԱՅՐԱՊԵՏ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Բժշկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ՎԻԼԵՆ ՀԱԿՈՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌՈՒԲԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի
ակադեմիկոս-քարտուղար

ԱՐՄԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Բժիշկ-ճառագայթաբան,
Բժշկական գիտությունների դոկտոր

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԱՍՏԴԻԿ ՓԵՓՈՅԱՆ
Հայաստանի ազգային ագրարային
համալսարանի Սննդի անվտանգության
և կենսատեխնոլոգիայի բաժնի վարիչ,
Կենսաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԵՐԵՄ ԶԱԽՈՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ
Նախագահության անդամ

ՂԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ
պատվավոր անդամ,
Տնտեսագիտության թեկնածու

ԱՐՄԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Հայաստանի Արդյունաբերողների և գործարարների
(գործատուների) միության Նախագահ

ՅՈՒՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Հայաստանի վաճառականների միության Նախագահ

ԿԱՌԼԵՆ ԱՐԱՄՅԱՆ
ՌԴ Զափագիտության ակադեմիայի ակադեմիկոս,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա
ԻԱՄ պատվավոր անդամ

ԿԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կենսաբանական գիտությունների թեկնածու

ՊՐԻԱ ՍԱՔՈՒՆՅԱՆ
Մոնրեալի ՄաքԳիլ համալսարանի դասախոս, դոկտոր,
պրոֆեսոր

ԻՐԻՆԱ ՎԻՆՈԳՐԱԴՈՎԱ
Սպառողների ազգային ասոցիացիայի
պատվավոր անդամ



2020 թ.

**ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ՄԱՐՔԵԹԻՆԳԻ
ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Մպատողների ազգային ասոցիացիայի «50 լավագույն արտադրողներ» ծրագրի շրջանակում 2020 թ. չորրորդ եռամսյակում կատարված ուսումնասիրությունները դարձյալ վերաբերում են հացաբուլկեղենի, հրուշակեղենի, կաթնամթերքի, հյութերի և ըմպելիքների, պաղպաղակի, մսամթերքի, թոչնամսի և ձվի, ոգելից և ոչ ոգելից խմիչքների, խոհարարական կիսապարրաստվածքների, հանրային սննդի, նաև բուսական և կենդանական յուղերի արտադրման և իրացման ոլորտներին:

Պայմանավորված կարանտինով նպատակահարմար չէր այցելել արտադրական ձեռնարկություններ, հետևաբար ուսումնասիրել ենք մոտ 285 մեծ ու փոքր առևտրային կազմակերպություն և 10-ից ավելի սննդի արտադրական ձեռնարկություն:

ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Գրանդ Քենդի» ընկերությունը շաքարային և ալրային հրուշակեղենի արտադրության ոլորտում առաջատար է: Այս ընկերության շոկոլադային ապրանքատեսականին ևս համարվում է լավագույններից: Նա տարածաշրջանում շոկոլադի հումք կակաո ռուներերի ներկրողն է:

«Գրանդ Քենդին» լայնորեն սպառվում է սեփական առաքման մանրամեծաձախ ցանցի միջոցով արտադրանքն առաքելով հանրապետության 7500 առևտրի կետեր: Գործում է 22 ֆիրմային խանութ, ինչի շնորհիվ ընկերության արտադրանքը միշտ թարմ է հասնում սպառողին:

«Գրանդ Քենդի» ընկերության տեսականին ներառում է ավելի քան 400 անուն արտադրատեսակ, այդ թվում՝ սերուցքային, շոկոլադե, մրգային և այլ բնական հավելումներով պաղպաղակներ: Մեծ պահանջարկ ունեն հատուկ տոնական միջոցառումների համար նախատեսված պաղպաղակ տորթերը:

«Գրանդ Քենդիի» խմորեղենների տեսականին ներառում է մրգային, մեղրային, ընկուզային և շոկոլադե հավելումներով ավանդական տորթեր, քաշային և հատային խմորեղեն: Արտադրման ընթացքում օգտագործվում է բացառապես բնական թարմ հումք՝ սերուցքային կարագ, բարձրորակ ալյուր, հատընտիր ընկուզեղեն, թարմ հավկիթ, մեղր, թարմ մրգեր, բնական շոկոլադ, կակաո փոշի և այլն: Հատուկ հանդիսությունների համար առաջարկվում են «Ֆուրշեթ» հավաքածուները:

Ժամանակակից տեխնոլոգիաներով և իտալական սարքավորումներով հագեցած արտադրամասում արտադրվում է սուրճ, որի համար, որպես հումք, օգտագործվում են արաբիկա և ռոբուստա սուրճերի ամենաբարձրորակ տեսակները: Ընկերությունն արտադրում է նաև սառը սուրճ և 3 տեսակի սառը թեյ՝ դասական սև, կիտրոնով և դեղձի համով:

Հայկական շուկայում լավագույնն են «Գրանդ Քենդիի» կարամելի տեսականին (սառնաշաքարային, մրգային, կաթնային, ընկուզային, շոկոլադապատ և այլն), դրաժեի տեսականին (շոկոլադապատ և շաքարային ջնարակով պատված), շոկոլադե ջնարակով պատված մրգերի չրերը, պրալինե, վաֆլե և կրեմային շոկոլադե կոնֆետները, կոնֆետների ընտրանին, շոկոլադե սալիկները՝ պատրաստված բարձրորակ կակաո-հումքից և բնական զանազան հավելումներից, դառը շոկոլա-



դե սալիկների տեսականին՝ 60, 70 և 80 տոկոս կակաո մթերքի պարունակությամբ:

«Գրանդ Քենդիի» արտադրությունը սերտիֆիկացված է ISO 9001:2015 որակի կառավարման և ISO 22000:2005 սննդի անվտանգության կառավարման չափանիշերով: Ընկերության արտադրանքի առավելությունն ու բարձր որակի գրավականը բացառապես բնական հումքն է: Այն մանրագինն ստուգման է ենթարկվում նրա կենտրոնական լաբորատորիայում, որը հավաստագրված է <US ISO 17025:2005 ստանդարտի համաձայն: 2019 թվականին ընկերությունը սերտիֆիկատ է ստացել նաև սննդի արտադրանքի անվտանգության կառավարման FSSC 22000V4.1. ստանդարտներին համապատասխան:



ԿԱԹ-ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս ոլորտում Սպառողների ազգային ասոցիացիայի մասնագետների կատարած մշտադիտարկման արդյունքներով ըստ իրացման ծավալների լավագույն տասնյակում կայուն տեղ են զբաղեցնում հետևյալ ընկերությունները.

- Աշտարակ-Կաթ ապրանքանիշ,
- Չանախ,
- Բանդիվան կաթ:



ԱՇՏԱՐԱԿ-ԿԱԹ ԱՊՐԱՆՔԱՆԻՇ

Ամանորյա տոները մոտենալուն հետ սկսվում է տնային տնտեսուհիների մտահոգությունը, թե տոնական սեղանների համար ինչ պատրաստեն, ինչով և ինչպես զարմացնեն հյուրերին: «Պարզև» ընկերության «Աշտարակ-Կաթ» ապրանքանիշը, ինչպես միշտ, առաջարկում է որակյալ կաթնամթերք ձեր ամանորյա սեղանների ամենահամեղ ուտեստների, խմորեղենի պատրաստման համար: Օգտագործելով մեր թարմ ու նրբահամ կաթը, մածուը, թթվասերը, կաթնաշոռը, պանրի տեսականին՝ ձեր աղցանները, բլիթները, թխվածքները կդարձնեք էլ ավելի համեղ: Մեր հոգատարության, ջանասիրության և աշխատասիրության շնորհիվ մենք կարողանում ենք բավարարել ամենաքմահաճ հաճախորդին:

Գներ հայկականը, նպաստեք մեր տնտեսության զարգացմանը:
Մնացեք մեզ հավատարիմ, օգտագործեք միայն բնական սնունդ և եղեք առողջ:
Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ՉԱՆԱԽ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Չանախ» ընկերությունը սպառողին մշտապես ներկայանում է սննդարար և առողջարար կաթնամթերքի մեծ տեսականիով՝ մածուին, կաթնաշոռ, կաթ, թան, թթվասեր և այլն, որոնք բոլորը համապատասխանում են Ստանդարտների ազգային ինստիտուտի սերտիֆիկացման և լաբորատոր փորձաքննության չափանիշերին: Ընկերությունը մեծ պատասխանատվությամբ է վերաբերվում մակնշման գործընթացին:

«Չանախ» արտադրում է «Նանե» ապրանքանիշով ացիդոֆիլային մածուին, կեֆիր և «Անուշիկ» ապրանքանիշով մածուին ու թթվասեր, տարբեր յուղայնությամբ կաթնաշոռներ և հերմետիկ փաթեթավորմամբ կաթ:

Ընկերությունն արտադրությունն իրականացնում է եվրոպական հոսքագծերով:



ԲԱՆԴԻՎԱՆ ԿԱԹ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Բանդիվան կաթ» ընկերությունն ընձեռում է իր ապրանքատեսականին գնելուց առաջ համ-տեսելու հնարավորություն: Այս ընկերությունը, որի նպատակն է ապահովել սպառողին բարձ-րակարգ կաթնամթերքով, միակն է Հայաստա-նում, որ պանիր է արտահանում Իսրայել:

Ընկերությունն իր հարազատ գյուղում հիմ-նել է խոզաբուծական և կովաբուծական ֆերմա-ներ, կաթնամթերքի և պանրի արտադրություն՝ ստեղծելով մեծաթիվ աշխատատեղեր:

«Բանդիվան կաթի» տեսականին մեծ է ու բազմազան՝ խնոցու կարագ, պանիրների լայն տեսականի պաստերիզացված կաթ, թթվասեր, կաթնաշոռ, մածուն: Տեսականին կարելի է ձեռք բերել նաև առցանց պատվիրելու միջոցով:

Ի դեպ, Ամանորին տանտիրուհիները կարող են առավել համեղ ու բազմազան դարձնել իրենց ուտեստները հատկապես «Բանդիվան կաթ» ապրանքանիշի կաթնամթերքով:



ՄԱՍԹԵՐԷԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«50 լավագույն արտադրողներ» ծրագրի շրջանակում իրականացվող ուսումնասիրու-թյունները վկայում են, որ դեռևս շարունակվում է իրացվել անբավարար որակի մասամթերք, մաս-նավորապես՝ «Շիրվանյան և ընկերներ», «Գա-յանե-Ջամե», «Կարինե-Նարինե», «Սոս» և այլ ընկերություններ իրենց հիմնականում ոչ բարձր որակի արտադրանքն իրացնում են հեռավոր մարզերում՝ օգտվելով սպառողների սակավ ի-րազեկվածությունից: Այս ընկերություններում ոչ պարզաճ սանիտարական վիճակ է, անձնա-կազմի բուժզննում չի կատարվում և այլն:

Երկրորդ եռամսյակում լավագույն ցուց-նյակում շարունակում են կայուն տեղ զբաղեց-նել հետևյալ ընկերությունները

- ԲԵԿՈՆ ՊՐՈԴՈՒԿՏ,
- ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻ,
- ԱԹԵՆՔ,
- ԱՌԴԵԼԻԿԱՏԵՍ,
- ՑԱՐԻՑԻՆՈ
(Царский продукт ապրանքանիշ),
- «ԱՐՄ ՄԻԹ»
(«Արմենիա մասմթերք» ապրանքանիշ),
- ԲԱԲԻԿ 90
(«Դի Ջի Միթ Ֆուդ» ապրանքանիշ),
- ԼՈՒՄԱ:



ԲԵԿՈՆ ՊՐՈԴՈՒԿՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Բեկոն Պրոդուկտ» ընկերությունն առաջատարն է վե-րամշակված մասմթերքի շուկայում և աչքի է ընկնում մի-ջազգային չափանիշերին համապատասխան տեխնոլոգի-աներով, սարքավորումներով և ստանդարտներով: Ընկե-րությունն աշխատում է ավստրիական և գերմանական սար-քավորումներով, ISO 22 ստանդարտով:

«Բեկոն Պրոդուկտը» հայկական շուկայում հանդես է գալիս համաշխարհային գաստրոնոմ մշակույթի լավագույն օրինակներով՝ պատրաստված ինչպես ավանդական, այն-պես էլ իտալական, իսպանական, գերմանական տեխնոլո-գիաներով:


«Բեկոն Պրոդուկտ» ապրանքանիշով մասմթերքի տե-սականին բազմազան է: Այն ներառում է եփած երշիկներ, նրբերշիկներ, սարդեկա, նրբախորտիկներ, եփած-ապխտած տավարի ֆիլե, վետչինա, խոզի մսով տեսակա-նի, բաստուրմա, սուջուխ, կիսապատրաստվածքներ և այլն:

ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱԳԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Բարի Սամարացի» ընկերությունն անում է հնարավորինը, որպեսզի սպառողին առաջարկի բարձրորակ, համեղ և մատչելի արտադրանք: Ընկերության արտադրանքի բարձր համային որակն ապահովվում է շնորհիվ միջազգային չափանիշերին համապատասխանող գերմանական և շվեյցարական ժամանակակից տեխնոլոգիաների:

Մսամթերքի արտադրման ոլորտում օգտագործվում են եվրոպական և ամերիկյան՝ մսի վերամշակման գերժամանակակից սարքավորումներ, ինչպիսիք են՝ LASKA-ն, ALPINA-ն, HENDELMAN-ը, KREMER GREBE-ն, VEMAG-ը:

«Բարի Սամարացի» ընկերությունն արտադրում է հում-ապխտած երշիկներ, եփած-ապխտած երշիկներ, եփած երշիկներ, նրբերշիկներ, նախուտեստներ, վակուումային փաթեթավորմամբ մսամթերք, կիսապատրաստվածքներ այլն:



ԱԹԵՆՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Հայր և որդի Երիցյաններ» ընկերության կողմից 1993 թ. հիմնադրված «Աթենք» ընկերությունն այսօր շուկայում ներկայանում է ավելի քան 200 ապրանքատեսակով:

Հավատարիմ մնալով իր արժեքներին՝ ընկերությունը տարեցտարի ավելացնում է ֆիրմային խանութները, վաճառքի կետերը: Նրա ապրանքատեսականին հասանելի է ոչ միայն Երևանում, այլև Հայաստանի բոլոր մարզերում: Մատակարարումն ապահովում են առաքման բաժնի աշխատակիցները, ընկերության ավտոմեքենաները, որոնք հազեցած են մսամթերքի թարմությունն ու սանիտարահիգիենիկ պայմաններն ապահովող սարքավորումներով: Ուսումնասիրվում ու ներդրվում են առավել ժամանակակից սարքավորումներ, գործարկվում՝ նորանոր հոսքագծեր:

ԱՌԴԵԼԻԿԱՏԵՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Առդելիկատես» ընկերության արտադրամասերում պահպանվում են սանիտարահիգիենիկ պահանջները, աշխատակիցները պարտադիր հագնում են աշխատանքային արտահագուստ: Գործարկվող սարքավորումները, փաթեթավորման պարագաները և հավելանյութերը հիմնականում ներմուծվում են իտալական, գերմանական, շվեյցարական ընկերություններից:

Արտադրանքն իրացվում է և հանրապետությունում, և արտերկրում:

«Առդելիկատես» ապրանքանիշով տեսականին ներառում է հում, եփած, ապխտած երշիկների մոտ 80, մսային կիսապատրաստվածքների մոտ 30 տեսակ, ինչպես նաև բաստուրմա, սուջուխ, սալամի, սարդելկա, հոթ դոգի նրբերշիկներ և այլն:



ՑԱՐԻՑԻՆՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Царскун продукт ապրանքանիշ

«Ցարիցինո» մսամթերքի կոմբինատի՝ միջազգային չափանիշերով կառուցված արտադրամասերում առկա են սանիտարահիգիենիկ գերազանց պայմաններ և լաբորատոր հսկողություն:

Ընկերության արտադրանքն իրացվում է համապատասխանության սերտիֆիկատով, սառնարան-ավտոմեքենաներով: Հումքը տեխնոլոգիական մշակումից առաջ և հետո ենթարկվում է լաբորատոր փորձաքննության, իսկ տեխնոլոգիական գործընթացի բոլոր փուլերն իրականացվում են ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերին, տեխնիկական հրահանգներին ու բաղադրագրերին համապատասխան:

«Ցարիցինո» ընկերությունը շուկայում ներկայանում է Царскун продукт ապրանքանիշով: Մսամթերքի տեսականին ներառում է կիսաապխտած երշիկներ, հում-ապխտած երշիկներ, եփած երշիկներ, նրբերշիկներ, սարդելկա, վետչինա, բաստուրմա, սուջուխ, ֆիլե և այլն:



ԱՐՄ ՄԻԹ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Արմենիա մսամթերք» ապրանքանիշ

«ԱՐՄ ՄԻԹ» ՍՊԸ-ի ողջ տեսականին հավատարիմ է պետստանդարտի կողմից սահմանված և հաստատված անհրաժեշտ տեխնիկական պայմաններին:

Ընկերությունը կիրառում է նորագույն տեխնոլոգիաներ, ժամանակակից սարքավորումներ և ընդգրկում արտադրության գործընթացում ոլորտի լավագույն մասնագետներին: Գործարանը հազեցած է եվրոպական արտադրության նորագույն սարքավորումներով, օդափոխության համակարգով և լաբորատորիայով:

«ԱՐՄ ՄԻԹ» ՍՊԸ-ն սպառողին ներկայանում է լայն տեսականիով՝ եփած երշիկներ, նրբերշիկներ, սարդելկաներ, կիսաապխտած երշիկներ, կիսապատրաստվածքներ, ավանդական շարք, դելիկատեսներ, հում ապխտած երշիկներ: Ընկերությունն արտադրում է նաև 100 անուն այլ ապրանքատեսակ:



ԲԱԲԻԿ 90 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Դի Ջի Միթ Ֆուդ» ապրանքանիշ

«Բաբիկ 90» մսամթերքի կոմբինատում արտադրությունն իրականացվում է գերմանական և շվեյցարական սարքավորումներով՝ արտադրական գործընթացում մարդու միջամտությունը հասցնելով նվազագույնի: Այստեղ խստագույնս պահպանում են սանիտարահիգիենիկ բոլոր նորմերը: Օգտագործվում են ներմուծված միս և այլ հումք: Գործարանն ունի լաբորատորիա, որտեղ մշտապես ստուգվում են և հումքի, և պատրաստի արտադրանքի որակը:

Ձեռնարկությունում արտադրվում է մոտ 70 տեսակի մսամթերք, որն առկա է ոչ միայն հայկական շուկայում, այլև արտահանվում է մի քանի երկրներ: «Դի Ջի Միթ Ֆուդ» ապրանքանիշով մսամթերքի տեսականին ներառում է վետչինա, սարդելկա, նրբերշիկ, սուջուխ, բաստուր-

մա, ապխտած, եփած, կիսաապխտած, հում ապխտած երշիկների տեսականի, ապխտած մսի տեսականի՝ ֆիլե, բուժենինա, բեկոն, խոզի կողեր, կիսապատրաստվածքներ՝ քյաբաբի ֆարշ, սառեցրած քյուֆթա, սառեցրած քյաբաբ, աղացած միս, ապխտած հավ, ջերքի:



ԼՈՒՄԱ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Չնայած «Լումա» ընկերության արտադրական փոքր ծավալներին, նրա արտադրանքը որակյալ է, համեղ և մականշմամբ բավարարում է օրենքով ներկայացվող պահանջները:

«Լումա» ապրանքանիշով տեսականին բազմազան է: Գործարանում արտադրվում են հում, ապխտած, եփած երշիկների տեսականի, նրբերշիկ, սարդելկա, բաստուրմա, սուջուխ և այլն: Ընկերության նպատակը մեկն է՝ բնակչությանն ապահովել որակյալ արտադրանքով:

ՊԱՂՊԱՂԱԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական սպառողական շուկայում հայրկապես ամռան ամիսներին պաղպաղակի ոլորում լավագույն արտադրողների շարքում են.

- Գրանդ Քենդի,
- Pink Berry,
- Աշտարակ-Կաթ ապրանքանիշ

ՓԻՆՔ ԲԵՐՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Փինք Բերրի» ամփոփում է 2020-ը:

2020-ի ավարտին հաշված օրեր են մնացել: Տարեվերջի ու տարեմուտի այս օրերին ընդունված է ամփոփել անցնող տարին ու գալիք տարվա համար միմյանց ուղղել բարեմաղթանքներ, որոնք լի են նոր հույսերով ու սպասումներով:

Դժվարություններով լի էր տարին, սակայն մեր ողջ թիմը պայքարեց և անգամ ամենածանր պահին փորձեց աշխատել, ստեղծել, կանգնել մեր ազգի կողքին և ուժերի ներածին չափով զարգացնել երկրի տնտեսությունը:

Մեր գործունեության առաջին իսկ պահից մենք մարդկանց պարգևել ենք քաղցրություն, դրական էմոցիաներ ու ժպիտներ: Սա «Փինք Բերրի» առաքելությունն է, որը մենք պատվով ենք կատարում և շարունակելու ենք կատարել:

Այժմ սուրբծննդյան ջերմ ու տաքուկ միջավայր է ստեղծվել «Փինք Բերրի» սրճարան-բուտիկում, որտեղ կարող եք վայելել մեր հեքիաթային ամանորյա մենյուն՝ հագեցած յուրահատուկ մատուցման լուծումներով և, իհարկե, արտակարգ համերով:

Յուրաքանչյուր Ամանոր նոր մեկնարկի սկիզբ է ազդարարում, և մենք ցանկանում ենք, որ այդ մեկնարկը բոլորիս համար լինի հաջող ու խոստումնալից:

Նոր տարին դիմավորենք մեծ ակնկալիքներով, աշխատանքային հաջողությունների սպասումներով և հրաշքների հանդեպ անմնացորդ հավատով:

Եվ, իհարկե, համախմբելով մեր բոլոր ուժերը, ջանքերն ու կարողությունները, ստեղծենք լավ ապագա հզոր երկրում:

Մենք շնորհակալ ենք մեր բոլոր սպառողներին և խոստանում ենք 2021-ը նրանց համար դարձնել ավելի քաղցր, հեքիաթային ու անակնկալներով լի:

«Փինք Բերրի». Վայելիր այս պահը...



ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

*Ոլորտի լավագույն տասնյակում
շարունակում են կայուն տեղ զբաղեցնել
«Շամպայն գինիների գործարանը»
և «Պոռշյանի կոնյակի գործարանը»:*



ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Երևանի շամպայն գինիների գործարանը վաղուց դարձել է ազգային ապրանքանիշ: Այստեղ արտադրվում են շամպայն գինիների ողջ տեսականին ֆրանսիական տեխնոլոգիայով՝ դասականից մինչև հավաքածու, նաև 3-15 տարեկան հնացման կոնյակներ: Համի և որակի գաղտնիքը պայմանավորված է միջազգային չափանիշներին համապատասխան արտադրության տեխնոլոգիայով, որակի հսկման լաբորատորիայով, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող մասնագետներով: Գինու արտադրության համար ընտրվում են ՀՀ տարբեր շրջաններում աճեցվող խաղողի լավագույն տեսակները:

Գործարանի արտադրանքը սերտիֆիկացված է: Տեսականին ներառում է՝ շամպայն (Հայկական շամպայն չոր, Հայկական շամպայն կի-

սաչոր, Հայկական շամպայն կիսաքաղցր, Կարմիր խաղուն գինի «Տիգրան Մեծ», Հայկական շամպայն կոլեկցիոն Բրյուտ, Հայկական շամպայն Կոլեկցիոն կիսաչոր), խաղողի գինիներ (Ֆրանս, Վալք Արենի, Նվարդ, Հարսանեկան, Հողի արյուն, Հայկ Նահապետ (Կարմիր կիսաքաղցր և Սպիտակ կիսաչոր), Վերաճնունդ, Սպիտակ քիշմիշ կիսաքաղցր, Սև քիշմիշ կիսաքաղցր), մրգապտղային սեղանի կիսաքաղցր գինիներ (Նռան գինի, Մոշի գինի, Բալի գինի, Ազնվամորու գինի, Ելակի գինի, Սև հաղարջ, Միկադո (Սալորի կիսաքաղցր գինի), կոնյակներ օրդինար և տեսակավոր (Ֆրանս 3, 5, 7, 10, 15 տարիների հնության, Մենուա 3 տարեկան, Տրդատ 5 տարեկան, Гордость Армении 3, 5, 7, 10 տարիների հնացմամբ, Նարե 6, 10, 15 տարիների հնացմամբ):



ՊՈՌՇԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Պոռշյանի կոնյակի գործարանի տեսակա-
նին բարձրորակ է, գեղեցիկ, համեղ, ինչն ար-
դյունքն է պարբերաբար ներդրվող նորագույն
տեխնիկական միջոցների, հմուտ և փորձառու
մասնագետների աշխատանքի:

Գործարանում արտադրվում են 3-30 տար-
վա հնության հայկական կոնյակներ (Մանե,
Պապ թագավոր, Շիրազ, Չարենց, Արծրունի,
Արփինե, Վարդան Մամիկոնյան, Արմենուհի,
Խենթ և այլն)՝ պատրաստված Արարատյան
դաշտի խաղողի լավագույն տեսակներից,
լիկյորներ ու նորագույն տեխնոլոգիաներով ար-
տադրված լավագույն մրգային՝ նռան, սալորի,
սև հաղարջի, բալի, ծիրանի, սերկևիլի, մոշի գի-
նիներ: Գործարանի բարձրորակ արտադրանքն
իրացվում է Հայաստանում, Ռուսաստանում,
Ուկրաինայում, Բելառուսում, Վրաստանում,
Գերմանիայում, ԱՄՆ-ում, Հունաստանում, Լե-
հաստանում և այլուր:

Այսօր պահանջված ու սիրված է նաև Պոռ-
շյանի կոնյակի գործարանի հայկական ավան-
դական բաղադրատոմսերով պատրաստված
«Ռոյալ» ապրանքանիշով պահածոյի տեսակա-
նին, որը մեծ պահանջարկ է վայելում նաև ար-
տասահմանյան շուկայում: Տեսականին արտա-
հանվում է Ռուսաստանի Դաշնություն, Միա-
ցյալ Նահանգներ, եվրոպական և մերձբալթյան
երկրներ, Ղազախստան:





ՍԱՆՖՈՒԴ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում յուղաճարպային բնագավառի առաջատար «Սանֆուդ» ընկերության՝ բարձր համային հատկանիշներով քիմքին հաճելի տեսականին միակն է տարածաշրջանում, որը պատրաստված է բացառապես բնական ճարպերից ու յուղերից, չի պարունակում կոնսերվանտներ և խոլեստերին: Ընկերությունը սպառողին առաջարկում է հալած բուսական խառնուրդի, սփրեդի, մարգարինի, խմորիչի լայն տեսա-

կանի՝ ներկայանալով Իմպերիա վկուսա, Ցարսկայա, Մասելկո, Սոնյաչնա Դոլինա ապրանքանիշերով: Բրիտանական ընկերության ուսումնասիրությունների արդյունքում «Սանֆուդ» արժանացել է միջազգային ISO:22000 ստանդարտի հավաստագրի:

Ժամանակակից, արդիական և գիտական ծավալուն տեխնոլոգիաներ, արտադրության, հայկական գործարար մշակույթի ընդլայնում, համագործակցություն հայ և արտերկրյա արտադրողների հետ: «Սանֆուդի» արտադրանքն արտահանվում է Վրաստան, Ռուսաստան և ԱՄՆ:

Արդեն հաջորդ տարի «Սանֆուդը» շուկայում կներկայանա անակնկալներով՝ սպառողի դատին ներկայացնելով «Սանֆուդ» ապրանքանիշով մայոնեզ, կետչուպ և պետտանդարտին համապատասխան բնական կարագ:

ՄՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ

ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Այսօր «Էյ-ի-Ջի-Սերվիսը» գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, ունի 15 տարածքային և իրենց կազմում 36 տեղամասային ծառայություն, որոնք սպասարկում են ավելի քան 700 հազար բնակիչ-բաժանորդի և մոտ 6000 բաժանորդ-կազմակերպություն: Յուրաքանչյուր ամիս հանրապետության տարածքում իրականացվում է ավելի քան 100 հազար բաժանորդի ներտնային գազասպասարկման համակարգերի տեխնիկական սպասարկում:

Գազ սպառող բաժանորդների ներտնային համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում, գազօգտագործող սարքավորումների կարգաբերում և վերանորոգում, արտահոսքի վերացում, ծխաօդատար համակարգի զննում, փականների քսայուղում, ձայնաազդանշանային անվտանգության համակարգի թեստավորում և այլն: Սրանք են «Էյ-ի-Ջի-Սերվիս» ընկերության նպատակն ու առաքելությունը (մանրամասն՝ էջ 14):





ՎԵՐԴԵ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԴԵ ընկերությունն օգտագործում է շրջակա միջավայրը չաղտոտող, անվսասն նյութեր և համագործակցում իտալական ու գերմանական FIRBIMATIC, Miele, PONY, Seitz, Kreussler, BUFA և այլ ընկերությունների հետ՝ իրականացնելով քիմիական և բնական մաքրում:

ՎԵՐԴԵ սրահն իրականացնում է նաև առաքում: Հագուստը պատվիրատուի նախընտրությամբ փաթեթավորվում է ծալած կամ հատուկ կախիչներով:

Այստեղ հնարավոր է հագուստն անջրաթափանց դարձնել, ինչն օգնում է պաշտպանվել ջրից ու ծյունից, հետևաբար լավ է դիմակայում կեղտաթծերին ու լաքաներին: Այս գործընթացն իրականացվում է Seitz գերմանական ընկերության նյութերով:

ՎԻ-ԷԼ-ՎԻ ՍԵՆԹՐ

ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՑԱՆՑ

Կենցաղային էլեկտրասարքավորումներ ներկրող ՎԻ-ԷԼ-ՎԻ ՍԵՆԹՐ խոշոր ընկերության բոլոր խանութները հագեցած են ամենաորակյալ, նորագույն սարքավորումներով, բազմազան ապրանքանիշերով: Վաճառատուները գործում են նաև մարզերում, ինչի արդյունքում Գյումրիում, Աբովյանում, Էջմիածնում, Հրազդանում, Արցախում, Սևանում և այլուր սպառողը կարողանում է ձեռք բերել որակյալ տեխնիկա:

Իրենց ապրանքանիշերը ներկայացնելու բացառիկ հնարավորությունը ՎԻ-ԷԼ-ՎԻ ՍԵՆԹՐ-ին են վստահել աշխարհահռչակ ՀԱՅՍԵՆԱ, ՍՈՆԻ, ԴԵԼՈՆԳԻ, ՍԱՄՍՈՆԻԳ և այլ խոշոր ընկերություններ: Ընկերությունը հանդես է գալիս նաև ՎԻԿԱՍ սեփական ապրանքանիշով:

Ի դեպ, գնումներ կարելի է կատարել նաև առցանց թե՛ ապառիկ, թե՛ կանխիկ վճարումով և ստանալ հնարավորություն մասնակցելու Mercedes Benz ավտոմեքենայի խաղարկությանը:

Անհատական մոտեցում յուրաքանչյուր հա-

վարագույրների մաքրման դեպքում ՎԵՐԴԵ-ի աշխատակիցները կօգնեն ձեզ հանել վարագույրները, իսկ դրանք մաքրելուց, արդուկելուց և փաթեթավորված տեղափոխելուց հետո անհրաժեշտության դեպքում նաև կկախեն:

Գորգերի մաքրումը նույնպես խորհուրդ է տրվում վստահել ՎԵՐԴԵ մաքրման սրահին: Եթե գորգը շատ հին է և հատուկ արժեք ունի, ապա սրահի փորձագետները կմաքրեն այն Green Earth տեխնոլոգիայով, ինչի արդյունքում գորգը չի վնասվի և լիովին կպահպանի իր գույնն ու որակը:

ՎԵՐԴԵ սրահում նրբորեն ու խնամքով մաքրվում են նաև հարսանյաց և երեկոյան զգեստները: Այս դեպքում օգտագործվող հատուկ նյութերը չեն վնասում զգեստը՝ պահպանելով զարդարանքն ու գործվածքները:

Սրահն իրականացնում է այնպիսի թավշյա, կաշվե ու մորթե իրերի մաքրում, ինչպիսիք են վերարկուները, բաճկոնները, կոստյումները, ժիլետները, տաբատները, ձեռնոցները և այլն:

ՎԵՐԴԵ մաքրման սրահն իրականացնում է կաշվե հագուստի և իրերի ներկում: Գունապնակն ընդգրկում է 1000-ից ավելի գույներ, ինչը թույլ է տալիս ինչպես լիովին փոփոխել կաշվի գույնը, այնպես էլ այն դարձնել մեկ երանգով բաց կամ մուգ:

www.verde.am կայքում ներկայացված են բոլոր ծառայությունների գնացուցակը և մանրամասն նկարագրումը:



ճախորդին, կուտակային քարտեր և զեղչային ճկուն համակարգ, ավտոմեքենայի ամենամսյա խաղարկություն, անվտանգ առաքում. ահա այն ամենը, ինչ ունի սպառողը ՎԻ-ԷԼ-ՎԻ ՍԵՆԹՐ-ի շնորհիվ:

ELBAT ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2011 թ. Quality Austria ավստրիական կազմակերպության կողմից Որակի կառավարման համակարգի ISO 9001:2008 միջազգային սերտիֆիկատի արժանացած հայ-գերմանական «Էլբատ» ընկերությունն արտադրում է կապարաթվային կուտակչային մարտկոցներ տարբեր ավտոմեքենաների համար: Ընկերության մարտկոցներն ունեն երաշխիքային և հետերաշխիքային սպասարկում:

«Էլբատ» ընկերությունը, հիմնվելով իր փորձի և շուկայի պահանջարկը ճիշտ գնահատելու կարողության վրա, ընդլայնել է իր արտադրանքը՝ առաջարկելով գերիզոր և անխափան էլեկտրական սնուցման ծառայություն և հուսալի սնուցման համակարգ: Ընկերության մասնագետները տեղադրում են առցանց UPS DC/AC կայաններ, այն է՝ ռեգերվային սնուցման արտաքին համակարգ, վաճառում և տեղադրում UPS համակարգերի լայն տեսականի, ինչպես նաև Valve կարգավորվող առաջատար և արդյունավետ մարտկոցներ (VRLA):

«Էլբատի» ծառայությունները ներառում են.

- տեխնիկական աջակցություն,
- վերջնական նախագծերի կառավարման ծառայություններ,
- վերանորոգում արտակարգ իրավիճակներում,
- վերլուծություն տեղում և համակարգի հզորության փորձարկում:

Ի դեպ, գործում է նաև ընկերության առցանց խանութը: Անհրաժեշտ է այցելել ընկերության կայքէջ (www.elbat.am), առցանց խանութ բաժինը, ընտրել մեքենային համապատասխան մարտկոց, լրացնել անհրաժեշտ տեղեկատվությունը և սպասել մասնագետների արձագանքին:





Գրեթե բոլոր արտակարգ պարահարների հիմքում մարդկային գործոնն է, ինչը, ցավոք, անկանխատեսելի է: Թունավորումից, գազի արտահոսքի հետ կապված այլ վրանգներից խուսափելու համար պետք է պարզապես առավել զգոն լինել և խստորեն պահպանել գազի անվտանգության կանոնները: Գազասպառման համակարգի տեխնիկական պայմանների խախտումները, ինքնաշեն վառարանների տեղադրումը, գազասարքերի ինքնուրույն տեղափոխումը և Ընկերության փականագործի արձանագրած այլ խախտումները չվերացնելը կարող են դժբախտ պարահարի պատճառ դառնալ:

Որոշ դեպքերում դժբախտությունների պատճառ հանդիսացող շմոլ գազն անգույն է, անհոտ

և անզեն աչքով հնարավոր չէ տեսնել կամ զգալ: Այն առաջանում է գազի թերաթումից, մինչդեռ սյրման համար հարկավոր են գազ և թթվածին, մաքուր օդ: Շմոլ գազն առաջանում է թթվածնի պակասի դեպքում: Գազի թերաթում է առաջանում, օրինակ, գազօջախի սյրիչները երկար ժամանակ միացրած թողնելու դեպքում. երբ սենյակը չի օդափոխվում, թթվածինը վերցնում է ներսից, ու կատարվում է մաքուր այրում: Բնականաբար, թթվածինը կամաց-կամաց պակասում է, առաջանում է թթվածնային քաղց, և արտադրվում է բավականին թունավոր շմոլ գազ: Գազի ներքնային սպասարկման ձայնաազդանշանային անվտանգության համակարգերի շորջօրյա անխափան աշխատանքը պարտադիր է:

Բնակչին թունավորումից և գազի արտահոսքի հետ կապված այլ վրանգներից պաշտպանելու նպատակով «Գազպրոմ Արմենիա» ընկերությունն իր աշխատակիցների միջոցով տարածում է «Ներքնային գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման» ուղեցույցներ և կոչ անում անպայման կարդալ և առաջնորդվել ուղեցույցում առկա տեղեկատվությամբ և հրահանգներով:

ՈՐԵՑՈՒՅՑ ԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆՔ ՍՏՈՐԵԿ:

ՀՀ տարածքում ներտնային գազասպառման համակարգի անվտանգ շահագործման և տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ (այսուհետ՝ Մատակարար) հանձնարարությամբ բաժանորդների ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման (այսուհետ՝ ՆՏԳՍՀ ՍՍ) ծառայության աշխատանքներն իրականացվում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 15.10.2014 թ. №383 Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ)» պայմանագրի հավելված №2՝ «ՆՏԳՍՀ ՍՍ ծառայությունների մատուցման մասին» Համաձայնագրի դրույթների համաձայն, պլանային կարգով՝ տարեկան առնվազն երկու անգամ պարբերականությամբ, ինչպես նաև արտապլանային՝ բաժանորդների կանչերով՝ «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Սպասարկող) կողմից:

ՓԱԿԱՆԱԳՈՐԾԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է.

- ներկայանալ բաժանորդին անձը հաստատող վկայականով, դիտարկել գազֆիկացման վերաբերյալ փաստաթղթերի փաթեթը, փաստացի գազահամակարգը համեմատել նախագծի հետ և իրականացնել ՆՏԳՍ համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն,
- ստուգել և ապահովել գազասարքերի, ծխաօդատար համակարգի (ծխատար և օդատար ուղիներ, ծխատար խողովակներ, վերնափեղկ, օդի ներհոսքի բացվածք) ու գազասպառման անվտանգության ձայնաազդանշանային համակարգի (ձայնաազդանշանային սարք և գազամատակարարման ընդհատման ավտոմատ փակող կափույր, այսուհետ՝ ՁԱ համակարգ) միացումների ճշտությունը և ամբողջականությունը, սահմանված կարգով կատարել դրանց տեխնիկական սպասարկումը,

ԿՐԿԻՆ ՀՈՐԴՈՐՈՒՄ Է ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- բաժանորդներին հրահանգավորել՝ ներտնային գազահամակարգում բնական գազից անվտանգ օգտվելու պահանջների վերաբերյալ,
- ՆՏԳՍ համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման ԱԿՏ-ում բաժանորդի հետ համատեղ հավաստել ծառայության մատուցման իրականացումը, ՆՏԳՍ համակարգում թերությունների խախտումների հայտնաբերման դեպքում կազմել համապատասխան արձանագրություն, գազասարքն անջատել, խցանային փականը խցափակել և կնքել, բաժանորդին իրազեկել արձանագրված խախտումների վերացման հնարավոր տարբերակների և ժամկետների վերաբերյալ:



ՀԱՐԳԵԼԻ ԲԱԺԱՆՈՐԴ



Դժբախտ դեպքերից զերծ մնալու համար պահպանեք կենցաղում բնական գազից անվտանգ օգտվելու պահանջները.

- առանց հսկողության մի՛ թողեք անվտանգության ավտոմատ համակարգեր չունեցող գործարկված գազասարքերը, դրանց երկարատև շահագործման ընթացքում հաճախակի օդափոխեք շինությունը,
- հնարավորության դեպքում լողասենյակներում տեղադրված ջրատաքացուցիչները տեղափոխեք խոհանոց կամ դրա համար նախատեսված այլ շինություն (սենք),

ՆՏԳՍ համակարգում փոփոխություններ կատարելու, գազասարքերի փոխարինման, վերատեղադրման կամ դրանց անսարքությունների վերացման համար դիմեք Մատակարարին կամ Սպասարկողին:

ՆՏԳՍ համակարգում փոփոխություններ կատարելու, գազասարքերի փոխարինման, վերատեղադրման կամ դրանց անսարքությունների վերացման համար դիմեք Մատակարարին կամ Սպասարկողին:

ԶԻ՝ ԹՈՒՅԼՍՐՎՈՒՄ

- անջատել գազասպառման անվտանգության ծայնաազդանշանային ավտոմատ սարքը էլեկտրասնուցումից (ազդանշանիչի էլեկտրաէներգիայի ծախսը տարեկան կազմում է ընդամենը՝ 8,64 կՎտ՝ շուրջ 400 դրամ),
- ինքնակամ փոխարինել, նորոգել և տեղափոխել գազասարքերը,
- գազօջախներն օգտագործել ջեռուցման նպատակով, դրանց վրա տեղադրել մեծ մակերեսով կաթսա կամ թիթեղ՝ առանց հավելյալ տակդիրի, քանի որ սահմանափակվում է այրման համար անհրաժեշտ օդի ներհոսքը, զարգանում է թերայրում





քը, զարգանում է թերայրում (շմուլ գազի առաջացում),

- օդատար ուղիներին միացնել օդաքարշ կամ ծխատար, դրանք փակել լաթով կամ այլ առարկաներով,
- փակել օդափոխության ու գազի այրման համար անհրաժեշտ օդի ներհոսքի նպատակով նախատեսված՝ դռան տակի բացվածքը,
- սահմանափակել ծխահեռացման ուղիների անցողունակությունը (քարշը), օգտագործել ծալքավոր նրբաթիթեղյա խողովակներ և այլ խոչընդոտներ:

Կրկին հորդորում ենք անվտանգության սարքերը 24 ժամ շարունակ միացված պահել, ինչը հնարավորություն կտա դժբախտ պատահարներից խուսափել:

ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ՕԳՏՎԵԼ ՈՍՏԱՍԱՐՔԵՐԻՑ, ԵՐԵ.

- գազասարքն անսարք է, կամ գազն այրվում է անկայուն կամ դեղնակարմրագույն (մրոտ) բոցով կամ խզվում (կտրվում) է այրիչից,
- գազասպառման անվտանգության ձայնաազդանշանային ավտոմատ համակար-

գը չի աշխատում կամ անսարք է,

- ծխաօդատար համակարգում բացակայում է քարշը, կամ առաջացել է ետքարշ,
- ձայնային ազդանշանի միացման դեպքում անհապաղ օդափոխել շինությունը և զանգահարել 1-04 հեռախոսահամարին:

ԽՈՐՀՈՐԴ ԳԻ ՏՐՎՈՒՄ

- օգտվել ծխատարով ջրատաքացուցիչներից և ջեռուցման սարքերից՝ թանձր մառախուղի, ուժեղ քամիների և տարվա առավել շոգ եղանակների ժամանակ,

- գազօջախները և ծխատարով գազասարքերն օգտագործել օդորակիչների (кондиционер) հետ համատեղ:

ԱՆՀՐԱՄԵՇՏ Է

- ծխատարով ջրատաքացուցիչները և ջեռուցման սարքերը միացնելուց առաջ և միացնելուց մինչև 5 րոպե հետո լուցկու բոցի մոտեցման եղանակով ստուգել ծխատար ուղիներում քարշի առկայությունը,

- առատ ձյուն տեղալու և ուժեղ քամիների դեպքում հաճախակի ստուգել ծխատար խողովակի արտաքին մասի ամբողջականությունը և մաքրել գլխամասը:

ԱՐԳԵԼՎՈՒՄ Է

1. Անջատել անվտանգության ազդանշանային համակարգը:
2. Կատարել գազահամակարգի ինքնակամ փոփոխություններ:
3. Գազասպառման անվտանգության ձայնաազդանշանային սարքի ազդանշանի՝ բնակարանում գազի հոտ զգալու, արտահոսքի, գազասպառման հետ կապված բնակիչների առողջական վիճակի վատթարացման (թունավորում, հրդեհ և այլն) կասկածների կամ այլ վթարային իրավիճակներում.
- անհապաղ զանգահարել շուրջօրյա գործող գազի վթարային ծառայություն՝ 1-04, կամ ԱԽՆ՝ 9-11 հեռախոսահամարներով,



- չծխել, չօգտվել բաց կրակից կամ կայծ առաջացնող որևէ միջոցից, չմիացնել և չանջատել էլեկտրասարքավորումները,
- փակել գազասարքերի և սնող գազախողովակների խցանային փականները, բացել դռները և պատուհանները, օդափոխել շինությունը,
- զգուշացնել ընտանիքի անդամներին և հարևաններին, նրանց հանել անվտանգ և չգազավորված տարածք:

Գազի մուտքը բնակարան անվտանգության ավտոմատ կափույրի միջոցով փակելու դեպքում արգելվում է ինքնակամ գործարկել այն՝ առանց վերացնելու վթարային ազդանշանի պատճառը:

ՁԵՐ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՉԱՉՍՏԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԿԴԱՎԱՐԵՑՎԻ, Եթե.

- խոչընդոտեք ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման, անսարք գազասարքի անջատման, խցանային փականի խցափակման և կնքման աշխատանքներին,
- պոկեք խցափակման կնիքը և ինքնակամ միացնեք գազասարքը:

Ներտնային գազասպառման համակարգի պարզաճ վիճակի պահպանման համար պարտախանարվություն է կրում բաժանորդը:

**ՀԻՇԵ՛Ք, ՈՐ
ՇՄՈՒՆ ԳԱԶԻ 0.4-0.5 % ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ
10-15 ՐՈՊԵՏԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՀԱՑՈՒ Է:**

**ՄԻ՛՛ ՄՈՌԱՑԵՔ, ՈՐ ՎԹԱՐԻ ԺԱՄԱՆԱԿ
ՎՏԱՆՁԻ ԵՔ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ ՈՋ ՄԻԱՅՆ ԴՈՒՔ,
ԱՅԼԵՎ ՁԵՑ ՇՐՋԱՊԱՏՈՂ ՄԱՐԴԻԿ:
ՊԱՀՊԱՆԵ՛Ք ՁԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ:**

ԵՎ ՀԻՇԵ՛Ք

**ԺԱՄԱՆԱԿԻՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ԴԻՄԵԼԸ
ԿՕԳՆԻ ՃԻՇՏ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՅՏՆԱՔԵՐԵԼ ԽՆԴԻՐԸ,
ԼՈՒԾԵԼ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԱՅՆ:**



ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ

ՎԵՐԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ

Գենետիկորեն վերափոխված օրգանիզմներ (ԳՎՕ) իրականում բնության մեջ գոյություն չունեն։ Դրանք արհեստական օրգանիզմներ են, որոնք օգտագործվում են վնասատու միջատների դեմ դիմադրողականության աճի, բերքատվության մեծացման նպատակով։ Օրինակ՝ ԳՎ բանջարեղեններն անհամեմատ ցրտադիմացկուն են, առավել պաշտպանված վնասատուներից ու արտաքսնապես գրավիչ։ Եթե ԳՎ սննդամթերք արտադրողները պնդում են, որ իրենց արտադրանքն անվտանգ է, ապա անկախ փորձագետների կարծիքով՝ կաթնասունների վրա կատարած հետազոտություններն անհանգստացնող են և տագնապալի։ Վերջիններս ապացուցում են, որ դրանք կարող են մի շարք հիվանդությունների և աղետների (քաղցկեղ, կանանց չբերություն, ճարպակալում, ալերգիկ հիվանդություններ, թունավորումներ, նորածինների մահացության աճ, կենդանական և բուսական աշխարհի բազմաթիվ տեսակների նվազում և ոչնչացում, կենսոլորտի քայքայում) պատճառ դառնալ։





Անկախ փորձագետները փաստում են նաև, որ ԳԿ մշակաբույսերը բացասաբար են անդրադառնում կենսոլորտի վրա: Գենետիկորեն վերափոխված օրգանիզմների մեծ մասը մի քանի սերունդ հետո անպտուղ է դառնում: Սա վերաբերում է նաև ԳԿ բուսականությանն ու դրանով կերակրվող կենդանիներին:

Որքան էլ որ անցանկալի ու տագնապալի է, սննդարդյունաբերության ոլորտում աշխարհում ԳԿՕ-ները լայն կիրառում ունեն, ինչի մասին ոչ միշտ է բարձրաձայնվում:

Եվրոպայում 2004 թվականից 0.9 տոկոս ԳՄՕ պարունակող յուրաքանչյուր մթերքի պիտակին պարտադիր պետք է մակնշվի ԳԿՕ պարունակության մասին, սակայն մսամթերք արտադրող ընկերությունները, օրինակ, օրենքով պարտավորված չեն հրապարակել, թե կենդանին, որից ստացվել է տվյալ մսամթերքը, ԳԿ կերով սնվել է, թե ոչ:


Մի խումբ մասնագետներ վստահ են, որ գենետիկ ինժեներիան մարդկությանը կփրկի սովից, սրանք ավելի քիչ ծախս են պահանջում, և ապագան նրանցն է: Մյուսների կարծիքով՝ այն կկործանի մոլորակի բուսական և կենդանական աշխարհը, նաև մարդկությանը: Նրանք զգուշացնում են, որ սրանց սերմերը քամու և միջատների միջոցով տարածվում են, ընկնում բնակլիմայական տարբեր տարածաշրջաններում աճող այլ բույսերի սերմերի մեջ՝ ներմուծելով օտար գեն, ինչը միշտ չէ, որ օգտակար է: Ընդ որում, հետագայում գործնականում անհնար է դառնում բուսական աշխարհը դրանցից «մաքրելն ու ազատելը»:

ԳԿ սննդի մեջ առաջացած թույլներն օրգանիզմի վրա ազդում են թե անմիջապես, թե դանդաղ: Այսօր արդեն ԳԿՕ-ներ օգտագործվում են այնպիսի մթերքների մեջ, ինչպիսիք են ալյուրը, օսլան, գազով ջուրը, մրգահյութերը, կա-

րագը, զարեջուրը, գինին, պահիրը և միսը:

Սպառողների համար մակնշումը մեծ նշանակություն ունի: Նրանք չեն կարող ճիշտ ընտրություն կատարել, եթե չգիտեն՝ ինչ են ընտրում: Պետք է մինչև շուկա հասնելն ապահովել վաճառվող սննդի անվտանգությունը: Սա սպառողական կազմակերպությունների պահանջն է ամբողջ աշխարհում, այդ թվում՝ Հայաստանում: Հայ սպառողը պետք է տեղյակ լինի, որ գենետիկ ինժեներիայի «դառը պտուղները» օրեցօր ընդլայնում են իրենց տարածման աշխարհագրությունը: Ցավալի է, բայց դրանք սերմերի ու սաժիլների ձևով մուտք են գործում նաև մեր երկիր, և բուսական ու կենդանական աշխարհով առանձնակի հետաքրքրություններ կայացնող մեր հանրապետությունը ևս ԳԿ սննդամթերքի տարածման թիրախ է դառնում: Քանի դեռ մեր հողերը քիչ թե շատ զերծ են ԳԿՕ-ներով աղտոտվածությունից, ամեն ինչ պետք է անել այդ չարիքի դեմն առնելու համար: Անհրաժեշտ է մեկտեղել բոլոր ուժերն ու հնարավորությունները հայրենի բնությունն ու ՀՀ ազգաբնակչությանը քաղաքակրթության մերօրյա չարիքից զերծ պահելու համար:



The background of the page is a microscopic image. The upper half features several bright red, rod-shaped structures, possibly bacteria or viruses, against a dark background. The lower half shows a dense field of translucent, blue, oval-shaped structures, which could be cells or spores, with many smaller circular elements scattered throughout.

ԱԶԱՏ ՌԱԴԻԿԱԼՆԵՐ



Ազատ ռադիկալը մոլեկուլի կամ ատոմի տեսակ է, որն ունի մեկ կամ երկու չզուգավորված էլեկտրոն և աչքի է ընկնում հարաբերական կայունությամբ: Ազատ ռադիկալները դիտվում են որպես մեկ էլեկտրոնից զրկված ոչ լիարժեք մոլեկուլներ, որոնք ամեն կերպ ձգտում են զուգավորվել՝ պոկելով այն «նորմալ» մոլեկուլից: Սովորաբար, օրգանիզմի բոլոր բջիջներն ու հյուսվածքները կառուցվում են «նորմալ» մոլեկուլներից, այդ պատճառով, երբ վերջիններս ազատ ռադիկալների կողմից ենթարկվում են հարձակման, օքսիդանում են, այսինքն՝ տալիս են իրենց «հարազատ» էլեկտրոնները «քաղցած» ռադիկալներին: Արդյունքում, «նորմալ» մոլեկուլից պոկելով ցանկալի էլեկտրոնը, ազատ ռադիկալը վերածվում է կայուն միացության, իսկ հարձակման ենթարկված մոլեկուլը դառնում է ազատ ռադիկալ: Նման փոխակերպումների հետևանքով վնասվում են ավելի շատ ու շատ բջիջներ և, ի վերջո, այդ շրջանը փակվում է:

Ազատ ռադիկալների առաջացման հաջորդ պատճառը, որը քիչ է տարածված երիտասարդների և առողջ մարդկանց շրջանում, դեղամիջոցների օգտագոր-

ծումն է: Ֆերմենտային փոխակերպումների հետևանքով որոշ դեղամիջոցներ օրգանիզմում կորցնում են իրենց էլեկտրոնները՝ վերածվելով ազատ ռադիկալների:

Ներկայումս լայնորեն քննարկվում է ծխախոտի ազդեցությունը. նիկոտինը և խեժերը վնասում են օրգանիզմի բջիջները՝ սկիզբ դնելով մի շարք ազատ ռադիկալային ռեակցիաների: Այդուհանդերձ օրգանիզմում ազատ ռադիկալների առաջացման ամենատարածված պատճառներն են վատ էկոլոգիան, անդրմանուշակագույն ճառագայթներով ախտահարումը և սթրեսային իրավիճակները:


Օրգանիզմում ազատ ռադիկալների խտության մեծացման հաջորդ պատճառը կալցիումի անբավարարությունն է: Հղիության շրջանում այն հանգեցնում է բջիջներում նյութափոխանակության նորմալ գործընթացների խախտման և ազատ ռադիկալների կուտակման:

Երկաթ պարունակող պատրաստուկների՝ նորմից բարձր և չվերահսկվող քանակով ընդունումը ևս կարող է ազատ ռադիկալների շատացման պատճառ դառնալ:

Բժիշկները վաղուց են գտել ազատ ռադիկալներին դիմակայող նյութեր՝ հակաօքսիդանտներ: Դրանց հիմնական աղբյուր է բուսական սնունդը: Անհրաժեշտության դեպքում օգտագործվում են նաև հաբեր՝ բազմավիտամինային կոմպլեքսի տեսքով:

Լևոն Աճեմյան


Սննդի անվտանգության ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնի լաբորատորիայի ղեկավար, կենսաբանական գիտությունների թեկնածու



ACRYLAMIDE



ԱԿՐԻԼԱՄԻԴ



Մարդու առողջության վրա սննդի վնասակար ազդեցության կանխարգելումն առաջադեմ մարդկության ուշադրության կենտրոնում է ողջ աշխարհում: Մշտապես կատարվող լայնածավալ հետազոտությունների նպատակն օրգանիզմի վրա սննդի հետ մուտք գործող մի շարք վնասակար նյութերի՝ պեստիցիդների, նիտրատների, ծանր մետաղների, ինչպես նաև սննդի պատրաստման ժամանակ կիրառվող սննդային հավելումների, պահածոյացնող և այլ վնասակար նյութերի ազդեցության բնույթը պարզելն է:

Առանձնակի ուշադրություն է դարձվում սննդի վերամշակման և խոհարարական արտադրանքի ստացման ժամանակ առաջացող վնասակար նյութերին, մասնավորապես՝ ակրիլամիդին (2-պրոպանամիդ, ակրիլաթթվի ամիդ, վինիլամիդ), որն ի զորու է օրգանիզմում առաջացնել գենային մուտացիաներ և նպաստել քաղցկեղի զարգացմանը: Փաստենք, որ քաղցկեղի ուսումնասիրման միջազգային գործակալությունը (IARC) ակրիլամիդը դասել է «մարդու համար հնարավոր ուռուցքաձին» նյութերի շարքին:

Ակրիլամիդը մարդու արյան մեջ հայտնաբերվել է դեռևս 2002 թվականին շվեդ գիտնականների կողմից: Կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ ակրիլամիդի մեծ քանակ առաջանում է ասպարագին ամինաթթվից, երբ սնունդը ենթարկվում է ջերմային մշակման 120-185 աստիճանի պայմաններում:

Ուշագրավ է, որ սննդի եփման կամ շոգեխաշման ժամանակ ակրիլամիդ կամ բոլորովին չի առաջանում, կամ էլ առաջանում է աննշան քանակով: Ակրիլամիդի բարձր պարունակությամբ աչքի է ընկնում հատկապես տապակած սննդամթերքը՝ կարտոֆիլային չիփսեր, եգիպտացորենի փաթիլներ, պաքսիմատներ, կրեկերներ, որոնց մեջ, ի դեպ, այդ միացության խտությունը կարող է սահմանվածից բարձր լինել հարյուր և ավելի անգամ: Նշված ուտեստները հաճելի համ ունեն (չի բացառվում դրանց մեջ համային բարելավիչների ավելացումը), և ավելի շատ օգտագործում են երեխաները, ուստի սալորջ մտահոգության աղիթ է:

Շվեդ գիտնականների հետազոտությունների տվյալները ստուգվել և հաստատվել են Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի և ԱՄՆ-ի տարբեր լաբորատորիաներում: Եթե շվեդների հետազոտություններում կարտոֆիլային չիփսերում ակրիլամիդի քանակը տատանվում է 300-2300 մկգ/կգ սահմաններում, ապա անգլիացիների տվյալներով այն կազմում է

420-3000 մկգ/կգ: Մյուսիները և խոթխոթան հացիկները պարունակում են ավելի քիչ քանակով վտանգավոր մոնոմեր (200-1030 մկգ/կգ): Թեսթավորման արդյունքում բացահայտվել է մի կարևոր օրինաչափություն: «Ակրիլամիդային» բոլոր մթերքները խոհարարական մշակման են ենթարկվել 120 և ավելի աստիճան ջերմության պայմաններում և տապակվել են թավայում, գրիլի վրա կամ ջեռոցում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կարտոֆիլը և հացահատիկներն օսլայի հետ մեկտեղ պարունակում են նաև մեծ քանակով ասպարագին, որն էլ 120-185 աստիճան ջերմության պայմաններում վերափոխվում է ակրիլամիդի:

Այս ամենից լավագույն ելքն ակրիլամիդի առաջացումը կանխարգելող միջոցառումների կազմակերպումն է, ինչը ենթադրում է հսկողություն հանրային սննդի կետերում, որտեղ ոչ միշտ է մեծ քանակով ձեթն օգտագործվում ընդամենը մեկ անգամ՝ պատճառ դառնալով դրանում ակրիլամիդի պարունակության ավելացման: Ժամանակն է, որ մշակվեն նորմատիվներ հասարակական սննդի օբյեկտներում միևնույն խմբաքանակի ձեթի օգտագործման հաճախականության, նաև տապակած ուտեստներում ակրիլամիդի թույլատրվող առավելագույն քանակի հաստատման համար: Չպետք է անտեսել նաև այս հարցում ԶԼՄ-ների դերը, որը խնդիր պիտի ունենա բացառապես առողջ սնունդը պրոպագանդելու:

Լևոն Աճեմյան

Սննդի անվտանգության ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնի լաբորատորիայի ղեկավար, կենսաբանական գիտությունների թեկնածու



ՄԵՏՐՈՅՈՒՄ



Խոշոր քաղաքներում մեկրոն տրանսպորտի ամենապարսպածված և հարմար տարբերակն է: Այն աշխատում է չվացուցակով, խցանումների մեջ չի հայտնվում և, ամենակարևորը, հնարավորություն է ընձեռում սոցիալական հեռավորություն պահպանելու:

Այսպես էլ, ինչպես ամեն տեղ, գործում են էթիկայի գրված ու չգրված կանոններ:



Մետրոյի տարածքում արգելվում է

- խմել գարեջուր կամ ալկոհոլային այլ ըմպելիքներ,
- ծխել կամ օգտագործել թմրանյութեր,
- ստեղծել իրավիճակներ, որոնք կարող են խանգարել մյուս ուղևորների տեղաշարժին (ստորգետնյա անցումներում տեղաշարժվել հեծանվով, սկուտերով, անվաճմուշկներով և այլն),
- բացել վագոնների դռները շարժման ընթացքում, ինչպես նաև կանգառներում խոչընդոտել դրանց բացումն ու փակումը,
- իրականացնել նկարահանումներ, տեղադրել գովազդներ, պոստերներ և տեղեկատվական կամ գովազդային բովանդակության այլ ապրանքներ՝ առանց մետրոյի ղեկավարության գրավոր թույլտվության, ինչպես նաև օգտագործել մետրոպոլիտենի տարածքը ձեռնարկատիրական և այլ գործունեություն ծավալելու նպատակով,
- ունենալ ուղեբեռ, որը կարող է աղտոտել տարածքն ու հարևանությամբ գտնվող ուղևորներին (ըմպելիքներ, պաղպաղակ բաց տարայով և այլն),
- ուղեբեռը տեղավորել ուղևորի համար սահմանված տեղերում, նստարաններին,
- լսել աուդիոձայնագրություններ կամ հեռարձակումներ առանց ականջակալների,
- մուտք գործել մետրոյի ցանկապատված կամ չարտոնված տարածքներ:

ՄԵՏՐՈՅՈՒՄ



Շարժասանդուղքի վրա գտնվելու ընթացքում հարկավոր է.

- կանգնել աջ կողմում, բռնել բազրիքից,
- քայլել ձախ կողմից, բռնել բազրիքից,
- տեղաշարժվել առանց հենվելու շարժասանդուղքի ֆիքսված մասերին,
- բռնել երեխաների ձեռքից կամ գրկել,
- ուղեբեռը հենել կամ դնել շարժասանդուղքի աստիճաններին կամ բազրիքներին,
- առավելապես զգույշ լինել երկար փեշերի կամ բարձրակրունկների դեպքում:

Գնացքին սպասող հարթակում չի կարելի.

- անցնել հարթակի սահմանային գծից,
- մոտենալ գնացքին, քանի դեռ այն լիովին չի կանգնել,
- խոչընդոտել վագոնից դուրս եկող ուղևորների տեղաշարժը:

Վագոնում գտնվելու ընթացքում չի կարելի.

- հենվել դռներին,
- խանգարել ուղևորների մուտքին և ելքին:



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մետրոյով տեղափոխվող թույլատրվող իրերի մասին տեղեկացվել պետք է նախօրոք: Սա արվում է, որպեսզի ուղևորներն անհարմար իրավիճակում չհայտնվեն, ասենք, ծավալուն ուղեբեռ, դահուկներ, այգեգործության փոքր գործիքներ, կենցաղային գազի բալոններ, հեծանիվ, կենդանիներ կամ թռչունների վանդակներ տեղափոխելիս:

ԵՂԻՆՋ ԵՐԿՏՈՒՆ

Urtica dioica L.

Հայկական տարածքները - աղինձ, աղկես, անձիրե, քանջար, եղին, կճան, կճանխոր, մոմոռ, մրմնջուկ



Նակ, հնձում գերանդիով, թողնում, որ թառամի, ինչից խայթը հիմնականում կորչում է, այնուհետև չորացնում են բացօթյա, լավ քամհարվող տեղում: Չոր հումքը մուգ կանաչ է, ունի թույլ հոտ, դառը համ: Այն պահում են տուփերի մեջ, 2 տարի: Արմատը հանում են աշնանը, չորացնում արևի տակ և պահում պարկի մեջ: 10 կգ թարմ տերևներից ստացվում է 2-3 կգ չոր հումք:

Եղինջը, որպես դեղաբույս, հնուց է հայտնի մարդկությանը: Ավիգեննան բույսի տերևներն ու սերմերն օգտագործել է գլխուղեղի ախտահարումների, քթային արնահոսության, ատամների հիվանդության, բրոնխիալ ասթմայի, պլերիտների և շնչուղիների բորբոքումների ժամանակ՝ հաճախ եղինջը զուգակցելով մեղրի և այլ դեղաբույսերի հետ:

Ամիրդովլաթն առաջարկում է բույսն օգտագործել արյունախիսման վերացման, խուխը ջրիկացնելու, բարակ աղիները մաքրելու, երիկամաքարային հիվանդության և միզապարկի ցավերի բուժման նպատակով: Նշել է նաև եղինջի օգտակարությունը ջրգողության և մաշկային խոցերի դեպքում:

Դեղաբույսի նկարագրությունը: Եղինջագգիների ընտանիքին պատկանող, 60-170 սմ երկարության բազմամյա խոտաբույս է: Ունի ձվանշտարաձև, ատամնաեզր հակադիր տերևներ, որոնք, ինչպես և ցողունը, ծածկված են գեղձային այրող մազիկներով: Վերջիններս շփվելով մաշկի հետ մխրճվում են նրա մեջ, բեկվում ու իրենց պարունակած թույնը (ուրտիցին, հիստամին, մրջնաթթու) լցնում այնտեղ՝ առաջ բերելով ուժեղ այրոցի զգացում: Ծաղիկները մանր են, միասեռ, կանաչ: Պտուղը փոքր ընկուզիկ է, արմատը՝ սողացող ու ճյուղավոր: Ծաղկում է հունիսից մինչև աշուն, պտղակալում՝ հուլիսից: Աճում է սովորաբար տեղերում, խոնավ անտառներում, թփուտներում, բացատներում, տնամերձ հողամասերում, ցանկապատերի մոտ՝ հաճախ տալով հոծ, անանցանելի բուսություն: Եղինջը բազմաճյուղ է սերմերով և վեգետատիվ եղանակով: Վատ է տանում երաշտը, քիչ զգայուն է ցրտի նկատմամբ:

Քիմիական բաղադրությունը: Տերևներում հայտնաբերված են վիտամիններ C (մինչև 269 մգ %), B խումբ, կարոտին, կարոտինոիդներ, K, պանտոտենաթթու. ինչպես նաև մրջնաթթու, քլորոֆիլ (մինչև 5 %), դաբաղանյութեր (2 %-ից ավելի), խեժ, պրոտոպորֆիրին, կոպրոպորֆիրին, սիտոստերին, գլիկոզիդ ուրտիցին, ֆիտոնցիդներ, կվերցետին, կոֆեինաթթու, ֆերուլաթթու, սիլիցիումաթթու, ագետիլստին, հիստամին, քիմիական տարրերից՝ կալիում, կալցիում, երկաթ, սիլիցիում, քրոմ, պղինձ, մանգան, ալյումին, վանադիում և այլն: Պտուղները պարունակում են մինչև 32,5 % ճարպայուղ: Բույսի մատղաշ տերևները 2 անգամ ավելի շատ վիտամին են պարունակում, քան հաղարջի պտուղները, իսկ կարոտինի պարունակությամբ եղինջը գերազանցում է գազարին, թրթնջուկին և չիչխանի պտուղներին:

Բուժական նշանակությունը: Բուժման նպատակով օգտագործում են բույսի տերևները, ծաղիկներն ու արմատը: Տերևները մթերում են բույսի ծաղկման ժամանակ,



Կիրառման եղանակները: Տերևներից եփուկ պատրաստելու համար 15 գ հումքը 200 մլ ջրի մեջ եփել 10 րոպե, ընկել 1-ական ճաշի գդալ օրը 3 անգամ: Արմատից ու սերմերից եփուկ պատրաստելու համար հավասար չափերով խառնված հումքերից վերցնել 15 գ, 20 րոպե եռացնել 200 մլ ջրում, քամել, հովացնել ու ընկել միանվազ 2-3 ճաշի գդալ, կամ 100 գ տերևը լցնել 0,5 լ ջրի և 0,5 լ քացախի խառնուրդի մեջ, եփել 30 րոպե, քնելուց առաջ դրանով լվանալ գլուխը մազաթափության ժամանակ:

Այլ օգտակար հատկանիշներ: Եղինջի մատղաշ ընձյուղներից ու տերևներից պատրաստում են ապուր, նաև տերևները թթու են դնում: Թարմ ընձյուղներն ուտում են աղով տրորելուց հետո:

Արշավիր Թորոպյան
Հայաստանի դեղաբույսերը
Երևան, 1983

ՑՈՒԼԻ ՏԱՐԻ

Ինչ սպասել Սպիտակ, մետաղյա ցուլից, կամ երնեկ թե այս Նոր տարին...
12.02.2021 - 30.01.2022

Դաժան նահանջ տարվան հաջորդող 2021 թվականը խոստանում է շատ ավելի հանգիստ լինել: Ցուլը, ինչպես ոչ մի այլ կենդանի, ուժեղ է, համառ, տոկուն և վճռական: Նա ազնիվ է, հանդարտ, կամային ու մի քիչ պահպանողական: Ցուլն օժտված է մետաղյա խառնվածքով և պողպատյա նյարդերով, սիրում է ջերմություն և հարմարավետություն:

Ցուլը խոստանում է վարձահատույց լինել կատարած անգամ ամենաչնչին աշխատանքի դիմաց: Նա չի հավատում արագ հարստությանը և դեպի հաջողություն տանող ճանապարհն անցնում է դանդաղ ու քրտնաջան աշխատանքով:

2021 ՀՈՐՈՍԿՈՊ

Խոյ



Կենդանակերպի մյուս նշանների համեմատ Խոյերն ամենահամառն են, և այն, ինչին նրանց չի հասցրել անգամ համառությունը, աստիճանաբար իրականություն կդառնա 2021-ին: Գլխավորը ներքին խաղաղությունը պահպանելն է:

Ցանկալի չէ, որ 2021-ի խորհրդանշիչ Ցուլի արձաթե փայլը շլացնի Խոյին: Պետք է ձեռնպահ մնալ չմտածված և չպլանավորված ծախսերից: Ֆինանսական առումով լավագույն ժամանակահատվածը, երբ կարելի է մի քիչ շռայլություններ թույլ տալ, գարնան ավարտն է:

Ցուլ



Ցուլն այս տարի կարծես թե կրկնակի հաղթող է, ընդ որում, թե՛ հոգեպես, թե՛ նյութապես:

2021-ին նա կկարողանա լեռներ շարժել, ինչը, իհարկե, համարժեքորեն կպարգևատրվի: Առաջին պլան կմղվի կարիերան, ուստի անմտություն է հարստանալու հնարավորությունը ձեռքից բաց թողնելը, հատկապես եթե զբաղվում եք սիրած աշխատանքով:

Հնարավոր են հանդիպումներ, որոնք կարող են արմատապես փոխել Ցուլերի կյանքը:

Երկվորյակներ



Անկանխատեսելիությամբ աչքի ընկնող Երկվորյակներին Ցուլը մասնագիտական հաջողություն է խոստանում: Խոսքը, իհարկե, աշխատասեր Երկվորյակների մասին է:

Սպիտակ ցուլը շրջադարձային է ֆինանսական բարեկեցության առումով: Երկվորյակների՝ գրուցակցի անգուգական տաղանդը կօգնի հասնել նպատակներին, ամրապնդել հեղինակությունն ընկերների և գործընկերների շրջանում, ընդլայնել ծանոթությունների շրջանակը և ստանալ մեկից ավելի շահավետ առաջարկ:

Խեցգետին



2021-ի հենց սկզբից Խեցգետիններին շատ իրադարձություններ են սպասվում: Նոր տարվա երկրորդ եռամսյակում նրանք կկարողանան տքնաջան աշխատել, իսկ տարվա վերջում կքաղեն պտուղները:

Չնայած հեռացող 2020-ի բոլոր դժվարություններին՝ Սպիտակ ցուլի տարում Խեցգետինները հեշտությամբ կլուծեն ֆինանսական խնդիրները:

Առյուծ



Ցուլը չի ընդունում արկածային և անխոհեմ գործողություններ: Հետևաբար Առյուծները, որոնք հակված են նման բաների, կարծես թե պետք է զգույշ լինեն: Հնարավոր է, որ կարևորագույն որոշ գործեր տարեսկզբին դանդաղ ընթացք ունենան:

Այս տարի Առյուծներն անընդհատ ստիպված կլինեն ապացուցել իրենց արժանիքները: Նրանք չեն վախենում դժվարություններից, հետևաբար չեն վախենում հաջողության հասնել քրտնաջան աշխատանքով:

Կույս



Աստղագուշակները կանխատեսում են հաջողություն բիզնեսում, աճ և ներդաշնակություն անձնական կյանքում: Ցուլի տարին կաջակցի Կույսերի ստեղծագործական ծրագրերին: 2021-ը դրամական հաջողություն է խոստանում: Ոչինչ անվճար չի տրվում, և Կույսն անընդհատ ապացուցում է դա: Տարվա կեսին սպասվում է ֆինանսական կայունություն:

Կշեռք



Կշեռքներին հիանալի տարի է սպասվում, ֆինանսական բարեկեցությունը կլինի կայուն, կստեղծվի հնարավորություն գումար վաստակելու՝ զբաղվելով բացառապես սիրած գործով: Հատկապես բախտավոր կլինեն ստեղծագործող կույսերը:

Տարվա առաջին կեսը կանխատեսում է սիրային որոշ խնդիրներ, տարեվերջը՝ նույն խնդիրներից ձերբազատում:

Կարիճ



Կարիճները Ցուլի տարում ֆինանսական մեծ խնդիրներ չեն ունենա, ավելին, կտրվի միաժամանակ մի քանի աղբյուրից եկամուտ ստանալու հնարավորություն, եթե միայն Կարիճը կամքի ուժ ունենա հաղթահարելու բնական ծուլությունը և ավարտին հասցնելու նախորդ տարում սկսած գործերը:

Այս նշանին սպասում են երկար հուզիչ ուղևորություններ ինչպես աշխատանքային, այնպես էլ անձնական:

Աղեղնավոր



Սպիտակ ցուլը գալիք տարում շատ չի փայփայի Աղեղնավորին: 2021-ին կարևորը զգուշությունն է: Հարկավոր է հաշվարկել, ստուգել, խորհրդակցել իրավասու մարդկանց հետ և հետո միայն ներդրումներ կատարել քիզներում:

Աղեղնավորը 2021-ին ընտանիքի վրա կենտրոնանալու հնարավորություն և անհագ ցանկություն կունենա, ինչը, բնավ չի խանգարի մասնագիտական ոլորտին:

Այծեղջյուր



Այծեղջյուրներին սպասվում է ոչ շատ պարզ, բայց բեղմնավոր տարի: Կարիք չկա իրադարձություններն արագացնելու: Ավելի լավ է՝ ամեն բան իր հունով ընթանա:

Շահույթ ստանալու և արժանապատիվ կյանք ապահովելու համար Այծեղջյուրները ստիպված կլինեն քրտնաջան աշխատել և օգտագործել լրացուցիչ վաստակի չնչին հնարավորությունն անգամ: Միայն այս դեպքում տարվա խորհրդանիշն արժանին կփոխհատուցի:

Ջրիռ



Ջրիռը չպետք է տրվի զգացմունքային պոռթկումներին: Նա միգուցե ցանկանա 2021-ին ամեն ինչ գլխիվայր շուռ տալ: Շտապենք հուշել, որ սա ոչ մի լավ բանի չի հանգեցնի, քանի որ Ցուլը չի ընդունում շտապողականություն ու աղմուկ:

2021-ին Ջրիռը կարող է նաև գայթակղիչ հեռանկարներ ունենալ՝ փոխելով աշխատանքն ու անգամ գործունեությունն ընդհանրապես, ինչը կդառնա երաշխիք կյանքի նյութական մակարդակի բարձրացման:

Ձկներ



Ձմռանը Ձկները մի փոքր խաղաղ ու մտածկոտ կլինեն, ինչին կհաջորդեն հետաքրքիր ուղևորություններն ու հաճելի ծանոթությունները:

2021-ին ֆինանսական անկայություն ունենալու համար պետք է այդ մասին պարզապես լռել: Աստղերը խորհուրդ չեն տալիս արմատապես փոխել աշխատանքը, առայժմ պետք է բավարարվել ունեցածով:



ԴԱՅԾԻՄԻԳՇՈՒՄ



Չվեր 2020

Այս ձմեռ առաջարկվող
մոդելները հիմնականում
ծուպավոր են՝ անկախ
հանգամանքից, թե
ինչ գործվածքից է հագուստը՝
բրդե կտորից թե մորթուց,
նախատեսված է առօրյայում
հագնելու, թե փոխական
կամ ժամանցային
միջոցառումներին
ներկայանալու համար:



Ձեռնոցներ

Ձեռնոցները մեր ժամանակի ամենակարևոր պարագաներից են, որոնք պաշտպանում են ձեռքերը ոչ միայն վիրուսներից, այլև ցրտից: Ճիշտ ընտրված ձեռնոցը կապահովի այն կրողի գերժամանակակից տեսքը, հատկապես եթե հաշվի է առնված թե, օրինակ կաշվե, թե ձեռագործ մոդելն է համապատասխանում մնացած հագուստներին:



Ձեռագործ հագուստ

Մրանք՝ գունավոր, հյուսկեն սվիտերները, նաև թեթև վերարկուները՝ համադրված շարժերի ու գլխարկների հետ, ակնհայտ են միշտ

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՆՈՐԱԶԵՎՈՒԹՅՈՒՆ



Տղամարդկանց ևս թույլատրելի է գույների բազմազանությունը, անգամ եթե դրանցից մի քանիսն ինչ-որ ժամանակ համարվում էր զուտ կանացի: Խոսքը մասնավորապես վարդագույնի երանգների մասին է:

Ձմռանը դիզայներները խորհուրդ են տալիս նախապատվությունը տալ երկարաճիտ կոշիկներին՝ խուսափելու համար ձյունից ու անձրևից, նաև ունենալ մեկ մեծ պայուսակ՝ բոլոր իրերը մեկ տեղում հավաքելու և լրացուցիչ խառնաշփոթից խուսափելու համար:

Կոշիկներ

Պողիումում մի իսկական բազմազանություն է: Կանայք ազատ են ձմեռային կոշիկների ընտրության հարցում: Դրանք երկար են ու կիսակարճ, զարդարված գունագեղ քարերով ու շղթաներով, կաշվից ու թավշաթաշվից:

Հատկապես նորաձև են սպիտակ մոդելները:



Պայուսակներ

Ընտրեք, որն ուզում եք: Նորաձև է գրեթե ամեն ինչ: Աշխատանքային ու առօրյա, հանգստի համար նախատեսված թե երեկոյան ընթրիքի, զարդարված մետաղական աքսեսուարներով կամ կարված դասական, միագույն կաշվից: Հարմար է, ուրեմն նորաձև է:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2020 թ. ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	2
«ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԿԻՆ ՉՈՐԴՈՐՈՒՄ Ե ՄՇՏԱՊԵՍ ՊԱՅՊԱՆԵԼ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ	14
ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՎԵՐԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ	18
ԱԶԱՏ ՌԱԴԻԿԱԼՆԵՐ	20
ԱԿՐԻԼԱՄԻԴ	22
ՄԵՏՐՈՅՈՒՄ	24
ԵՂԻՆՋ ԵՐԿՏՈՒՆ	26
ՑՈՒԼԻ ՏԱՐԻ	27
2021 ՉՈՐՈՍԿՈՂ	28
ՁՄԵՌ 2020	30



+ 374 10 23-93-27

+ 374 10 29-75-31

aeg@aegservice.am

Ներտնային գազասպառման համակարգերի
տեխնիկական սպասարկման
ծառայությունների մատուցում

Մեր աշխատանքը Ձեր անվտանգության երաշխիքն է



www.aegservice.am





www.armconsumer.am